ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/138

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Արջիջի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արջիջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103» գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5260-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 22.03.2022թ.-ի թիվ Ե-165 գրության հիման վրա, 28.03.2022թ.-ին «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.03.2022թ.-ին:

28.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/138 համարի ծածկագիրը:

06.04.2022թ.-ին և 15.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2022թ.-ին:

2. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.03.2022թ.-ի թիվ Ե-165 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ,,Հրազդան ԲԿ,, ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է գնանշման հարցմամբ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103 ծածկագրով դեղորայքի ձեռքբերման մրցույթ: Մրցույթի արդյունքներով 9-րդ, 22-րդ, 25-րդ, 26-րդ, 32-րդ.35-րդ.46-րդ. 51-րդ.58-րդ.59-րդ.65-րդ. 71-րդ. 77-րդ. 79-րդ. 80-րդ. 81-րդ. 86-րդ. 87-րդ. 90-րդ. 91-րդ. 94-րդ. 96-րդ. 97-րդ. 98-րդ չափաբաժիններով մրցույթի հաղթող է ճանաչվել

,,ԱՐՋԻՋԻ„ ՍՊԸ-ն, որի հետ 02 փետրվար 2022թ. կնքվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4 պայմանագիրը:

Ապրանքի մատակարաման համար օրենքով սահմանված կարգով և պայմանագրին կից հավելված 1-ի՝,. Տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցով,, սահմանված՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից կատարվել են բանավոր պատվերներ: ,,ԱՐՋԻՋԻ,, ՍՊԸ -ն կողմից մատակարարվել են պատվերները, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ապրանքները չեն ընդունվել՝ հավելված 1.1-ով ներկայացված և փաստացի կատարված մատակարարումներով հայտնաբերված անհամապատասխանությունների պատճառով՝ այդ մասին տեղյակ պահելով մատակարարին:

Այնուհետև 17.02.2022թ. մատակարարին ներկայացվել է գրավոր պատվեր, որտեղ նշվել է, որպեսզի փոխարինվեն ապրանքները, իսկ չմատակարարելու դեպքում տրվի պատասխան: Սակայն նորից մատատակարարումը տեղի չի ունեցել:

25.02.2022թ. նորից մատակարարին ներկայացվել է գրավոր պահանջ ապրանքի մատակարարման համար, որտեղ մանրամասն նշվել են անհամապատասխանությունները: Դարձյալ անպատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերի միակողմանի լուծվել է „Հրազդան ԲԿ„ ՓԲԸ-ի և ,,ԱՐՋԻՋԻ,, ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արջիջի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արջիջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Արջիջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5260-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է

հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ բանավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Արջիջի» ՍՊԸ-ի միջև 02.02.2022թ.-ին կնքվել է թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ դեղորայքի ձեռք բերումը կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2022թ:

iv. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Արջիջի» ՍՊԸ-ի միջև 02.02.2022թ.-ին կնքվել է թիվ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Պատվիրատուի կողմից Մասնակցին 17.02.2022թ.-ին ուղղված թիվ ՀԲԿ-Ե-92 գրությամբ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն և «Արջիջի» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն Մասնակցին խնդրել է 4 օրյա ժամկետում մատակարարել հավելված 1.1-ով նշված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ: Հայտնել են նաև, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» պայմանագրով նշված չափաբաժիններով մատակարարված ապրանքները չեն համապատասխանում Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ին, մասնավորապես՝ «ապրանքային նշան և արտադրող երկիր» պահանջներին: Խնդրել են նշված չափաբաժինները

համապատասխանեցնել հավելված 1.1 և «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» պայմանագրի պահանջներին և նշված ժամկետում մատակարարել ապրանքները: Ինչպես նաև հավելել են, որ նշված ժամկետում ապրանքների չմատակարարման դեպքում պետք է ուղարկել գրավոր պատասխան:

vi. Պատվիրատուի կողմից Մասնակցին 25.02.2022թ.-ին ուղարկվել է թիվ ՀԲԿ-Ե-108 նույնաբովանդակ գրություն:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.03.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծելու մասին թիվ ՀԲԿ-Ե-152 համարի ծանուցման համաձայն՝ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Արջիջի» ՍՊԸ-ի միջև 02.02.2022թ.-ին կնքված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից պատվերի շրջանակներում մատակարարվել են ապրանքներ, որոնք չեն համապատասխանել Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ին, մասնավորապես՝ «ապրանքային նշան և արտադրող երկիր» պահանջներին: Պատվիրատուի կողմից բազմիցս բանավոր կերպով /զանգով/, ինչպես նաև գրավոր տեղեկացվել է Մասնակիցը, որ նշված ապրանքները չեն ընդունվելու և անհրաժեշտ է փոխարինել և համապատասխանեցնել հավելված 1.1-ով սահմանված պահանջներին: Մասնակցի կողմից որևէ արձագանք չի եղել:

Հաշվի առնելով, որ «Արջիջի» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2. և 2.1.7 կետերը, «Հրազդան Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագրից, համարելով այն լուծված: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5260-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով

առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Արջիջի» ՍՊԸ-ի միջև 02.02.2022թ.-ին կնքված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0103-4» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից պատվերի շրջանակներում մատակարարվել են ապրանքներ, որոնք չեն համապատասխանել Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ին, մասնավորապես՝ «ապրանքային նշան և արտադրող երկիր» պահանջներին: Պատվիրատուի կողմից բազմիցս բանավոր կերպով /զանգով/, ինչպես նաև գրավոր տեղեկացվել է Մասնակիցը, որ նշված ապրանքները չեն ընդունվելու և անհրաժեշտ է փոխարինել և համապատասխանեցնել հավելված 1.1-ով սահմանված պահանջներին: Մասնակցի կողմից որևէ արձագանք չի եղել: Հաշվի առնելով, որ «Արջիջի» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2. և 2.1.7 կետերը, «Հրազդան Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագրից, համարելով այն լուծված՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.03.2022թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծելու մասին թիվ ՀԲԿ-Ե-152 համարի ծանուցումը:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործով ձեռք չի բերվել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Պայմանագրի 2-րդ բաժնի դրույթներով սահմանված գործողությունները, մասնավորապես՝ Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն կարող էր չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ, եթե գտնում էր, որ մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին, և ոչ թե հավելված 1.1-ին, ինչպես նշվել են Պատվիրատուի կողմից Մասնակցին ուղղված գրություններով և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցմամբ:

Այս փաստի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի 2.1.7-րդ կետերով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա

լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5260-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/138 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**